11/246-2014 105

ք.Երևան «24» 07 2014թ.

«ՀՀ Ազգային Անվտանգության Ծառայություն»-ն, ի դեմս տնօրենի տեղակալ՝ Արամ Հակոբյան -ի, որ գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Կանա Բարձրունք» ՓԲԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրենի ժ/պ՝ Վանիկ Ասատրյան –ի, որը գործում է Ընկերությա կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ոռոգման ջրի մատակարարմա ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն):

1.2 Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալ պայմանագրի կողմից առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չ վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

1.3 Ծառայությունների մատուցման ժամկետները և ծավալները նշված են սույն պայմանագր անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ ի հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ.

2.1.3.Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանա հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 20 օր առաջ տեղեկացնելո Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքու թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարմա ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմի ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջե վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը:

2.3.2. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանա հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառվա վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանվա ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքու Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության հաշիվ ապրանքագիրը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում՝ 8000 խ.մx16.7 դր. = 133600 (Մեկ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հաշիվ ապրանքագրերի հիման վրա մինչև դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի համար:

5.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.3 Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ծավալների խախտման դեպքում Կատարողը վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5%-ի չափով:

5.4 Կատարողի կողմից սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կատարողը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար պայմանագրի գնի 0,05%-ի չափով:

5.5 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտականությունները լրիվ կատարելուց:

5.6 Այն դեպքում, երբ <Գնումների մասին> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/ կամ Կատարողին հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն չափով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է 5 տարի ժամկետով

7.2 Պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր

7.3 Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու հիմքերը որոշվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով.

7.4 Պայմանագրի գործողության ժամկետը համարվում է ներկայացված նույն ժամկետով, եթե Պայմանագրի գործողության ժամկետը ավարտից երեք ամիս առաջ կողմերից որևէ մեկը մյուսին չի դիմել այն դադարեցնելու համար:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, հավելված 1 կնքվում է 4 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ< ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
<<ՀՀ ԱԱԾ>>	<<Կանաչ-Բարձրունք>>ՓԲԸ
ք.Երևան, Նալբանդյան 104	ք.Երևան, Արմենակյան 272
ՀՎՀՀ 01507079	ՀՎՀՀ 01524084
ՀՀ Ֆին.նախ.աշխատակազմի գործառնական վարչություն	<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ <<Նորք-Մարաշ>> մ/ճ
Հ/Հ 900011030096	Հ/Հ 163478100007
	Հեռ. 65-45-70
Տնօրենի տեղակալ Հ. Հակոբյան	Տնօրենի ժ/պ Վ. Մանուկյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
«.....»_____2014թ. N 15 պայմանագիր

Ըստ ստորև նշված պահանջվող ոռոգման ջրի կազմեցին ջրօգտագործման հետևյալ պլան-ժամանակացույցը
Ըստ գյուղատնտեսության մշակաբույսերի հողատարածքների և պահանջվող ոռոգման ջրի քանակը*

Համայքի անվանումը,բաժանարարի համար	Ընդամենը		այդ թվում																	
	ոռոգվող հողատարածքը	Պլանային ջուրը	Հացահատիկ		Բանջար-Բոստան		Ծխախոտ		Պտղատու այգի		Խաղողի այգի		Բազմամյա խոտ		Նորատունկ այգի		Անտառ		Տնամերձ	
	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.	հա	հազ.խմ.
Նորքի ջրանցք	0,8	8											0,8	8						
ՀՀ ԱԱԾ																				
ՌՀՀ																				
Վարչություն																				
Ընդամենը	0,8	8											0,8	8						

Ներառյալ Ընկերության ոռոգման համակարգի կորուստները:

Ջրօգտագործման պլան-ժամանակացույց

Համայքի անվանումը,բաժանարարի համարը	Չափման միավոր	Պլանային ջուրը	այդ թվում ըստ տասնօրյակների																	
			Մարտ			Ապրիլ			Մայիս			Հունիս			Հուլիս			Օգոստոս		
		հազ.խմ	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III
	լ/վրկ		0	0	0	0	0	0	0.4	0.4	0.4	0.4	0.6	0.6	0.6	0.7	0.7	0.7	0.7	1.2
	հազ.խմ		0.00	0.00	0.00	0	0	0	0.2	0.4	0.4	0.4	0.5	0.5	0.5	0.7	0.7	0.7	0.7	1
	աճող.		0.00	0.00	0.00	0	0	0	0.2	0.6	1	1.4	1.9	2.4	2.9	3.6	4.3	5	5.7	6.7
Ընդամենը																				

այդ թվում ըստ տասնօրյակների

Սեպտեմբեր			Հոկտեմբեր			Նոյեմբեր			Դեկտեմբեր			
I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	
0.7	*0,4*	*0.4*	0	0	0	0	0	0	0	0	0	
0.70	0.40	0.20	0	0	0	0	0	0	0	0	0	8
7.40	7.80	8.00	8	8	8	8	8	8	8	8	8	

Ընկերության ընդհանուր ժողովի .....2014թ.որոշմամբ ոռոգման ջրի մեկ խ.մ գինը 2014թ.համար սահմանվել է 16.7 ՀՀ դրամ
Մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարումը կատարվում է համաձայն հոսքաչափի ցուցմունքի:

«Կանաչ Բարդություն»ՓԲԸ տնօրենի ժ/պ՝
_____Վ.Ասատրյան
/ստորագրություն/

Պայմանագրային գումարը՝_____հազ.դրամ

Անդամավճարը՝_____հազ.դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ հազ.դրամ

«ՀՀ ԱԱԾ» տնօրենի տեղակալ՝
_____Ա.Հակոբյան
/ստորագրություն/